## Բ.

## 1800—1840

ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ դարին վերջերն էր նաև՝ որ Հայ մը գիւտն ըրաւ ի Գուզկունճուք Վոսփորի բիւլպէնտի վրայ ձեռագործ նկարակերտութեան· որով նոյն կողմերն և ի Սկիւտար եազմաճիութեան արհեստը բարգաւաճելով՝ պատճառ եղաւ մինչև ցայսօր հարիւրաւոր չունեւոր ընտանեաց ապրուստին և ծնունդ և սնունդ տուաւ քանի մը տասնեակ եազմայի վաճառականներու։ Կ. Պոլսի Մեծ չուկային և խաներուն մէջ ու գաւառները և Տէրութեան գլխաւոր քաղաքները՝ Պէրութ, Զմիւռնիա, Գահիրէ, Աղեքսանդրիա, արշիպեղագեան կղզիները կը փնտռուին ու յարգի են միշտ Սկիւտարի այս եազմաները։ Հ. Ղուկաս Ինճիճեան Մխիթարեանը՝ կերգէ հետևեալ ոտանաւոր տողերով այս գիւտը.

Գուզկունճուք անուն մեծագոյն շէնին,
Աղձասեալ անուն Գօսինիցային.
Այ Բանտէլէյմոն իւր եկեղեցին,
Նիւտ Մետրապոյտի հին Քաղկեդոնին:

Տեղի է գիւտի հայ գործաւորին,
Նոր գործարանի ընտիր ներկողին,
Նըկարակերտի գործոց բեհեզին,
Բոլորից այլոց ընտրելագունէն: